# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 6

## ԵՔԿԱ-ՀՄԱԱՊՁԲ-22/07 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան «01» օգոստոսի 2022թ.

2022թ-ի օգոստոս 1-ին՝ ժամը 12:00-ին, ՀՀ, ք. Երևան, Մյասնիկյան 20 հասցեում գտնվող՝ «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի գրասենյակում, տեղի ունեցավ մսեղիքի ձեռքբերման ԵՔԿԱ-ՀՄԱԱՊՁԲ-22/07 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Ա. Խաչատրյան՝ | «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի գիշատիչների և պրիմատների բաժնի կենդանաբույժ, |
| Դ. Ղազարյան՝ | «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի գանձապահ, |
| Ն. Վարդանյան՝ | «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի տնտեսական մասով պահեստապետ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ա. Խաչատրյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի գնումների համակարգող, մասնագետ՝ Հ. Գուլաբյանը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## 1. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Ընթացակարգը որոշ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու որոշման մասին:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՈՐՈՇ ՉԱՓԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՄԱՍՈՎ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ և ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Հ. Գուլաբյանը Հանձնաժողովի անդամներին տեղեկացրեց, որ ԵՔԿԱ-ՀՄԱԱՊՁԲ-22/07 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում 3-րդ չափաբաժնի մասով ՝ «Արամ Գրիգորյան Մեխակի» Ա/Ձ-ն սահմանված ժամկետում՝ ոչ ուշ քան 29.07.2022թ-ը ներառյալ, սահմանված կարգով չի ներկայացրել պայմանագրերի իր կողմից հաստատված օրինակները, ինչպես նաև՝ պայմանագրի և որակավորման ապահովումները:

Հանձնաժողովը որոշեց.

1. «Արամ Գրիգորյան Մեխակի» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել համապատասխան գործընթաց:

2. Հաշվի առնելով, որ 3-րդ չափաբաժնի մասով հաջորդող տեղեր զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները գերազանցում են գնման հայտով սահմանված նախահաշվային գները, Ընթացակարգը՝ 3-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետով սահմանված պահանջները:

3. Հաստատել Ընթացակարգը 3-րդ չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Ա. Խաչատրյան ______________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Դ. Ղազարյան ______________

Ն. Վարդանյան ______________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Հ. Գուլաբյան ______________